

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ  
Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Կ.Շահգալոյանը

ք.Հրազդան

28.06.2013թ.

**ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝**

- Մարզի խորհրդի անդամ 67 համայնքների ղեկավարներից 57-ը /բացակայում էին Նոր Հանրն, Ջրատատ, Հատիս, Նոր Գյուղ, Սևաբերդ, Արզել Գետամեջ, Քանաքեռավան, Քարաշամբ, Պողոսյան համայնքների ղեկավարները/
- Վ.Բակլայան, Ա.Ղազարյան - ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալներ
- Մ.Գարեգինյան-ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
- Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ
- Վ.Սահակյան, Մ.Հովհաննիսյան, Ա.Կարապետյան, Վ.Ալեքսանյան, Վ.Եսայան - ԶՕԸ-ների տնօրեններ

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝**

1.Համայնքներում ոռոգման ներտնտեսային ցանցի ջրագծերի շահագործման, պայմանագրերի կնքման, մատակարարված ջրի վարձավճարների գանձման և ԶՕԸ-ների աշխատանքների կազմակերպման մասին:

*/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ.Եղիազարյան/*

2.Մարզի համայնքների 2013թ. վեց ամսվա բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:

*/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյան/*

3.Համայնքային ծառայության իրավիճակի և համայնքային տեղեկատվական համակարգերի շահագործման մասին:

*/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ տարածքային ծառայությունների գործունեության համակարգման վարչության ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի պետ Վ.Թովմասյան/*

4.Երեխայի ընտանիքում ապրելու իրավունքը և դրա իրացման հնարավոր այլընտրանքները:

*/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա.Պետրոսյան/*

**5. ՀՀ օրենքների մեջ կատարված փոփոխությունների մասին:**

*/գեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ  
Ա. Հարությունյան/*

**6. Այլ հարցեր:**

**ԼՍԵՑԻՆ՝**

1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ. Եղիազարյանի գեկուցումը համայնքներում ոռոգման ներտնտեսային ցանցի ջրագծերի շահագործման, պայմանագրերի կնքման, մատակարարված ջրի վարձավճարների գանձման և ԶՕԸ-ների աշխատանքների կազմակերպման մասին:

*/Տեղեկանքը կցվում է/:*

2. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ. Նահապետյանի գեկուցումը մարզի համայնքների 2013թ. վեց ամսվա բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:

*/Զեկուցումը կցվում է/:*

3. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ տարածքային ծառայությունների գործունեության համակարգման վարչության ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի պետ Վ. Թովմասյանի գեկուցումը համայնքային ծառայության իրավիճակի և համայնքային տեղեկատվական համակարգերի շահագործման մասին:

*/Զեկուցումը կցվում է/:*

4. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա. Պետրոսյանի գեկուցումը երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի և դրա իրացման հնարավոր այլընտրանքների մասին:

*/Զեկուցումը կցվում է/:*

5. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ա. Հարությունյանի գեկուցումը ՀՀ օրենքների մեջ կատարված փոփոխությունների մասին:

*/Զեկուցումը կցվում է/:*

*Հանձնարարվեց՝*

*ՀՀ Կուրայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ.Եղիազարյանին՝*

Վերահսկել ԶՕԸ-ների աշխատանքը՝ անխափան ջրամատակարարում և վարձավճարների հավաքագրումը ապահովելու նպատակով.

*Առաջարկվեց՝*

*Համայնքների ղեկավարներին՝*


-Միջոցներ ձեռնարկել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ և ընթացիկ տարվա օգոստոսի 1-ի դրությամբ սեփական եկամուտների կատարողականը բոլոր հարկատեսակների գծով հասցնել 100 %-ի:

-Լուրջ ուշադրություն դարձնել համայնքներում <<Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ>>-ի ներդրման գործընթացին և մինչև տարվա վերջ ՀԿՏՀ-ները տեղադրել նաև Թեղենիք, Գեղարդ, Գողթ, Հացավան, Սևաբերդ համայնքներում:

-Հիմք ընդունելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա.Գևորգյանի կողմից հաստատված ՀՀ համայնքներից տվյալների հավաքագրման, ամփոփման և համայնքների տեղեկատվական բազա էլեկտրոնային ծրագիր մուտքագրման կարգը համապատասխան ժամկետներում և ըստ պահանջվող ձևերի նեկայացնել տեղեկատվություն ցուցանիշների վերաբերյալ:

-Համայնքներում ընտանեկան խնամքից զրկված երեխաների տեղավորման հարցերում առաջնորդվել ՄԱԿ-ի կոնվենցիայի կողմից սահմանված սկզբունքներով:

-Օրենքների մեջ կատարված փոփոխությունների մասին պարզաբանումներն ընդունել ի գիտություն:

 Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ